

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ «ՅՈՒՍԻՓԻ ԼԻԲԵՐԹԻ» ԱՆՎԱՍԱՅԼԱԿ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խնդրում ենք «Լիբերթի» անվասայլակն օգտագործելուց առաջ ամբողջությամբ կարդալ այս ձեռնարկը:
Անվասայլակն օգտագործելուց առաջ օգտագործողը և նրան օժանդակող անձը պետք այս անվասայլակն անվտանգ օգտագործելու վերապատրաստում անցնեն որակավորված սպասարկողի կամ կլինիկական մասնագետի կողմից:

Այս անվասայլակի կամ ձեռնարկի հետ կապված որևէ հարց կամ խնդիր ունենալու դեպքում խնդրում ենք անհապաղ կապ հաստատել մեզ հետ հետևյալ միջոցներով՝

Հեռ.՝ +1 818.255.0100

Փոստ՝ «ՅՈՒՍԻՓԻ Ուիլս ֆոր Հյումանիթի»
ԱՄՆ, 91311 Կալիֆորնիա, Չաթսուորթ, 9509 Վասսար Ավենյու, շենք Ա

Էլ. փոստ՝ info@ucpwheels.org

Տարբերակ 3 (2019թ. սեպտեմբեր)

ԶԵՐ ԱՆՎԱՍԱՅԼԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Անվասայլակի սպասարկումն իրականացնող կենտրոնի/հաստատության անվանումը

Անվասայլակը սպասարկողի անունը

UCP |  Wheels
for Humanity

Հասցե՝

Հեռ.՝

«Լիբերթի» անվասայլակի սերիական համարը՝

Անվասայլակի առաքման ամսաթիվը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շնորհակալություն «ՅՈՒՍԻՓի Լիբերթի» անվասայլակ գնելու համար	2
ՁԵՐ անվասայլակի սպասարկումն իրականացնողի կոնտակտային տվյալները	2
Կարևոր տեղեկություն. Խնդրում ենք կարդալ մինչև այս «Լիբերթի» անվասայլակն օգտագործելը	5
Օգտագործողի անվտանգությունն ու ապահովությունը	5
«Լիբերթի» անվասայլակի նախատեսված օգտագործումը	5
Նախազգուշացում	5
Ընդհանուր նախազգուշացում	5
Լանջակալը և կոնքի ֆիքսացիայի գոտին	6
Անվասայլակն օգտագործելը	6
Անվասայլակը ձևափոխելը	7
Ինչպես կարգավորել, հարմարացնել և գործարկել Ձեր անվասայլակը	8
Ծանոթացեք Ձեր անվասայլակին	8
Անվի կողպիչները	9
1) Կիրառելը	9
2) Հարմարացնելը	10
Նստատեղը	10
3) Նստատեղի բարձի դիրքը	10
4) Ճիշտ դիրքը	11
Ծնկները զատող բարձիկը (զատիչ)	12
5) Ինչպես ամրացնել, հարմարացնել և հեռացնել	12
6) Ճիշտ դիրքը	12
Հենցային համակարգը	12
7) Թիկնակի բարձի դիրքը	13
8) Ճիշտ դիրքը	13
Կողային հենաբարձիկները	13
9) Ճիշտ դիրքը	13
Կոնքի ֆիքսացիայի գոտին և լանջակալը	14
10) Կոնքի ֆիքսացիայի գոտին. ինչպես տեղադրել և ճիշտ կրել	14
11) Լանջակալը. ինչպես տեղադրել և ճիշտ կրել	14
Ոտնատեղը	14
12) Ճիշտ դիրքը	14
Գլխակալը	15
13) Ճիշտ դիրքը	15

Հետևի անիվները	15
14) Ինչպես հեռացնել հետևի անիվները	15
15) Ինչպես տեղադրել հետևի անիվները	15
Արմնկակալները	15
16) Ճիշտ դիրքը	15
Հավասարակշռության համակարգերը	16
17) Ինչպես տեղադրել	16
18) Ինչպես հեռացնել	16
19) Բարձրությունը կարգավորելը	16
Սեղանիկը	17
20) Ինչպես տեղադրել, հեռացնել և կարգավորել սեղանիկը	17
21) Ճիշտ դիրքը	17
Ինչպես տեղափոխել անվասայլակը	17
Ինչպես տեղաշարժվել անվասայլակով	18
Անվասայլակն օգտագործելով շարժվելը	18
Աստիճաններով բարձրանալը կամ իջնելը՝ անվասայլակն օգտագործելով	19
Անվասայլակի վրա նստելը	19
Անվասայլակի վրա կամ անվասայլակից տեղափոխվելը	20
Ճնշումը թուլացնելու կառավարումը և տեխնիկան	20
Մաքրումը, ընթացիկ սպասարկումը և նորոգումը	22
Ինչպես պահպանել անվասայլակը	22
Մաքրումը	23
22) Շրջանակը	23
23) Երեսքաշները, լանջակալը, սրունքի հետին շրջանը պահող և կոնքի ֆիքսացիայի գոտիները	23
24) Բարձերը և բարձիկները	23
25) Հետևի անիվները և առջևի անվակները	24
Խնդիրների դեպքում	24
Այլ ցուցումներ	25
Շրջանակն արագ հավաքելու ուղեցույց	27
Նստոցային համակարգի տարրերի արագ հավաքման ուղեցույց	30

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Խնդրում ենք կարդալ մինչև այս «Լիբերթի» անվասայլակն օգտագործելը

Օգտագործողի անվտանգությունն ու ապահովությունը

Անվասայլակների տարբեր տեսակներ կան, որոնք նախատեսված են օգտագործողի՝ նստելու և շարժվելու կարիքների համար: Օգտագործողի կարիքներին լավագույնս համապատասխանող անվասայլակի տեսակը և կարգավորումներն ընտրելիս պետք է խորհրդակցել անվասայլակի որակավորված սպասարկողի հետ:

Անվասայլակի ապահովությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ անվասայլակի կարգավորումներով և միջավայրային գործոններով: Անվասայլակի ապահովությունն ուղղակիորեն ազդում է օգտագործողի անվտանգության վրա: Անվասայլակի կարգավորումները պետք է իրականացվեն անձնական գործոնները հաշվի առնելով՝ ներառյալ օգտագործողի կարողությունները, ուժը, հավասարակշռությունը և կոորդինացիան: Անվասայլակի կարգավորումների ցանկացած փոփոխություն կազդի անվասայլակի ապահովության վրա: Փոփոխություններ կարելի է կատարել միայն անվասայլակի որակավորված սպասարկողի հետ խորհրդակցելուց հետո:

«ԼԻԲԵՐԹԻ» ԱՆՎԱՍԱՅԼԱԿԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Այս անվասայլակը նախատեսված է մանկաբուժական անվասայլակներ օգտագործողների համար, որոնք ուղղահայաց դիրքով նստելու համար լրացուցիչ կեցվածքային օժանդակության կարիք ունեն:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ընդհանուր նախազգուշացում

Հետևյալ նախազգուշացումը վերաբերում է վերահաս և (կամ) հնարավոր վտանգավոր իրավիճակներին, որոնք չկանխվելու դեպքում կարող են հանգեցնել լուրջ վնասվածքների, մահվան կամ անվասայլակի վնասման:

Զգերազանցել «Լիբերթի» անվասայլակի քաշի սահմանափակումը՝ 75 կիլոգրամը: Դա օգտագործողի քաշի և անվասայլակի վրա գտնվող առարկաների քաշի հանրագումարն է: Քաշի սահմանափակումը գերազանցելը կարող է վնաս հասցնել անվասայլակին կամ մեծացնել ընկնելու կամ հետ թեքվելու հավանականությունը:

Թույլ չտալ, որ օգտագործողը փորձի անվասայլակով բարձրանալ կամ իջնել թեքահարթակներ կամ հետ ու առաջ շարժվել տասն աստիճանից բարձր թեքությունների վրա: Դա վտանգավոր է և մեծացնում է ընկնելու կամ հետ թեքվելու հավանականությունը:

Թույլ չտալ, որ օգտագործողը փորձի անվասայլակով բարձրանալ սայթաքուն կամ սառույցով, յուղով կամ ջրով պատված թեքության վրա: Դա կարող է հանգեցնել անկայուն իրավիճակի:

Չփորձել բարձրացնել անվասայլակը՝ բռնելով հեռացվող մասերից, ինչպես օրինակ՝ սեղանիկից, անվասայլակը տեղաշարժելու բռնակից: Դա կարող է հանգեցնել անկման կամ վերահսկողության կորստի: Բարձրացնել անվասայլակը՝ միայն շրջանակից բռնելով:

Չափից ավելի **չձգել** հեղույսը և սարքավորման պարագաները, որոնք տարբեր մասերն ամրացնում են շրջանակին: Դա կարող է լրջորեն վնասել անվասայլակը և ազդել դրա անվտանգության ու ամրության վրա:

Այս անվասայլակը նախատեսված չէ որպես ավտոտրանսպորտային միջոցի ուղևորի նստատեղ օգտագործվելու համար: Անվասայլակը տեղափոխելիս օգտագործողին մշտապես տեղափոխել անվասայլակից:

Լանջակալը և կոնքի ֆիքսացիայի գոտին

Լանջակալը և կոնքի ֆիքսացիայի գոտին նախատեսված են անվասայլակի վրա մարմնի պատշաճ կեցվածքի պահպանմանն օժանդակելու համար: Լանջակալը և կոնքի ֆիքսացիայի գոտին օգտագործել միայն օգտագործողի կեցվածքի պահպանմանն օժանդակելու համար: Լանջակալի և կոնքի ֆիքսացիայի գոտու ոչ պատշաճ օգտագործումը կարող է օգտագործողին լուրջ վնասվածք պատճառել կամ հանգեցնել նրա մահվան:

Որևէ դեպքում անվասայլակի լանջակալը կամ կոնքի ֆիքսացիայի գոտին չօգտագործել որպես մեքենայում ուղևորի նստատեղի ամրագոտի: Դրանք նախատեսված չեն որպես ամրագոտի օգտագործվելու համար և օգտագործողին չեն ապահովագրի կտրուկ արգելակման դեպքում առաջ նետվելուց:

Ապահովել, որ օգտագործողն անվասայլակի նստատեղի համակարգում լանջակալը և կոնքի ֆիքսացիայի գոտին կրելիս վար չսահի: Դա տեղի ունենալու դեպքում օգտագործողի շնչառությունը կարող է վտանգվել՝ հանգեցնելով մահվան կամ լուրջ վնասվածքի:

Որևէ դեպքում չօգտագործել լանջակալն առանց կոնքի ֆիքսացիայի գոտու: Կոնքի ֆիքսացիայի գոտին չօգտագործվելու դեպքում օգտագործողն այնուամենայնիվ կարող է վար սահել, իսկ լանջակալը կարող է պատճառ դառնալ խեղդամահ լինելուն:

Որևէ դեպքում լանջակալի ներքևի հատվածը չամրացնել կոնքի ֆիքսացիայի գոտուն: Դա կոնքի ֆիքսացիայի գոտին կծգի վերև:

Չափից ավելի չձգել լանջակալը: Այն պետք է կիպ և հարմարացված լինի, բավականաչափ ամուր՝ դիրքը պահելու համար, սակայն ոչ այնքան ամուր, որ շնչարգելություն առաջանա կամ մաշկը սեղմվի:

Չափից ավելի չձգել կամ չթուլացնել կոնքի ֆիքսացիայի գոտին: Այն պետք է ամուր և հավասարաչափ կապված լինի: Չպետք է լինեն ուժեղ ճնշում գործադրող հատվածներ: Դա կարող է պառկելախոց առաջացնել: Եթե կոնքի ֆիքսացիայի գոտին շատ թույլ է ամրացված, ապա անվասայլակն օգտագործողը կարող է վար սահել: Ժամանակին օգնություն չցուցաբերվելու դեպքում դա կարող է հանգեցնել խեղդամահ լինելուն: Կոնքի ֆիքսացիայի գոտին չպետք է կարողանա սահել վեր՝ մինչև ստամոքսի հատված:

Որևէ դեպքում լանջակալը կամ կոնքի ֆիքսացիայի գոտին չօգտագործել որպես զսպիչ-սահմանափակող հարմարանք կամ անգիտակից վիճակում գտնվող օգտագործողին կապելու համար:

Անվասայլակն օգտագործելը

Չգոնություն ցուցաբերել անվասայլակը թաց կամ սայթաքուն մակերեսի վրայով տեղաշարժելիս: Դա կարող է հանգեցնել անկայուն իրավիճակի կամ վերահսկողության կորստի:

Չգոնությունն ցուցաբերել խոչընդոտների կամ ճանապարհի ռիսկային հատվածների վրայով անվասայլակը տեղաշարժելիս: Դրանք կարող են վնասել անվասայլակը և հանգեցնել անկման, հետ թեքվելու կամ վերահսկողության կորստի:

«Լիբերթի» անվասայլակը պատրաստված է տարատեսակ նյութերից, այդ թվում՝ մետաղից, պլաստիկից, փրփուրից և գործվածքից: Անվասայլակը չօգտագործել ցնցուղ ընդունելիս, լողավազանում կամ որևէ ջրային օբյեկտում: Ջրի կամ գերխոնավության ազդեցությունը կարող է առաջացնել անվասայլակի մետաղի ժանգոտման կամ կոռոզիայի, փրփուրի բորբոսման և գործվածքի պատռման: Ջրի ազդեցության դեպքում անմիջապես չորացնել անվասայլակը:

Յուրաքանչյուր անգամ անվասայլակն ավազի կամ փխրուն հողի վրա օգտագործելուց հետո մաքրել այն: Ավազը թափանցում է անվասայլակի անվակունդ և շարժամասեր: Դա կարող է վնաս հասցնել և ի վերջո հանգեցնել անվասայլակի անսարքության:

Խուսափել անվասայլակն ընդհանուր օգտագործման ճանապարհների վրա տեղաշարժելուց: Եթե անվասայլակն ընդհանուր օգտագործման ճանապարհների վրա տեղաշարժելն անհրաժեշտություն է, ապա տեղաշարժել գոլշողությամբ:

Ինքնուրույն չփոփոխել անվասայլակի կարգավորումները: «Լիբերթի» անվասայլակի կարգավորումները փոփոխելուց առաջ մշտապես խորհրդակցել անվասայլակի որակավորված սպասարկողի հետ: Նախատեսվածից ավելի՝ հետևի անիվները առաջ բերելը և (կամ) նստատեղի համակարգը թեքելը կարող է հանգեցնել նրան, որ անվասայլակը հետ թեքվի: Մշտապես օգտագործել հավասարակշռության համակարգերն այն ընթացքում, երբ օգտագործողը ընտելանում է անվասայլակի կարգավորումների ցանկացած փոփոխության:

Օգտագործողի նստելու դիրքի, չափերի կամ քաշի համար անվասայլակը վերահարմարացնելուց առաջ մշտապես խորհրդակցել անվասայլակի որակավորված սպասարկողի հետ: Անվասայլակը վերահարմարացնելուց հետո մշտապես ստուգել ամրացումները:

Աստիճաններով չբարձրանալ կամ չիջնել, երբ անվասայլակի հավասարակշռության համակարգերն ամրացված են կամ ներքև սեղմված: Հեռացնել հավասարակշռության համակարգերը կամ դրանք վեր բարձրացնել աստիճաններով բարձրանալուց կամ իջնելուց առաջ: Անվասայլակը մակերեսով տեղաշարժելուց առաջ ստուգել, որ հավասարակշռության համակարգերը կրկին ամրացված են կամ ներքև սեղմված:

Անվասայլակը ձևափոխելը


«Լիբերթի» անվասայլակը նախագծված և արտադրված է բժշկական սարքավորումների համար սահմանված որակի՝ միջազգայնորեն ճանաչված չափանիշներին համապատասխան: Այն փորձարկվել է բազմաթիվ չափանիշներով՝ որակի և ամրության ապահովման նպատակով:

Չձևափոխել այս անվասայլակը: Անվասայլակի որակավորված սպասարկողից կամ անվասայլակի որակավորված տեխնիկական մասնագետից բացի որևէ այլ անձ չպետք է ձևափոխի այս անվասայլակը: Օգտագործել միայն հավաքման համար թույլատրված միջոցներ և պարագաներ: Չկան թույլատրված այնպիսի միջոցներ, որոնք ներառում են որևէ անձի կողմից շրջանակի գայլիկոնում կամ կտրում:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ, ՀԱՐՄԱՐԱՑՆԵԼ ԵՎ ԳՈՐԾԱՐԿԵԼ ՁԵՐ ԱՆՎԱՍԱՅԼԱԿԸ

Ծանոթացեք Ձեր անվասայլակին

Ստորև պատկերը ցույց է տալիս «Լիբերթի» անվասայլակի մասերն ու բաղադրիչները:



Նստատեղի համակարգ և անվասայլակի շրջանակ՝

1. Գլխակալ
2. Թիկնակ
3. Նստատեղ
4. Նախանստոսկրային նիստ [ազդրային հատվածի համեմատ իջեցված հետնամասով նստատեղ]
5. Ծնկները զատող բարձիկ (զատիչ)
6. Ծնկները զատող բարձիկ
7. Իրանի օժանդակ բարձիկ
8. Կոնքի օժանդակ բարձիկ
9. Օգտագործողի կոնքն ու ծնկներն իննստուն աստիճան պահելով անվասայլակը թեքելու մեխանիզմ
10. Արմնակակալ
11. Կողային պաշտպանակ
12. Անվասայլակը տեղաշարժելու բռնակ
13. Հետևի անիվ
14. Կոճակի միջոցով արագ հեռացման հարմարանք
15. Ձեռքով հրվող՝ տեղաշարժման լրացուցիչ անվահեց
16. Անվի կողպիչ
17. Առջևի անվակ
17. Ոտնատեղի խողովակ
18. Ոտնակ
19. Սրունքի հետին շրջանը պահող գոտի
20. Հավասարակշռության համակարգ
21. Անվակի համակարգի պատյան
22. Անվի առանցք

Անվի կողպիչները

1) Կիրառելը

Անվի կողպիչն օգտագործել այն դեպքերում, երբ անհրաժեշտ է, որ անվասայլակն այլևս չշարժվի դադարի վիճակ բերվելուց հետո: Մշտապես կիրառել անվի կողպիչը՝ օգտագործողին անվասայլակի վրա կամ անվասայլակից տեղափոխելուց և մարմնի հենման կետերի փոփոխությունն կատարելուց առաջ:

Անվի կողպիչները նախատեսված են որպես անվասայլակի շարժը կանգնեցնող կամ դանդաղեցնող արգելակներ օգտագործվելու համար:

Անվի կողպիչները գործարկելու համար դեպի առաջ սեղմել անվակողպիչ բռնակները մինչև անվի կողպիչը Պատկեր 1-ի դիրքում հայտնվի: Անվի կողպիչների գործարկումը դադարեցնելու համար բռնակները հետ բերել Պատկեր 2-ի դիրք:



Պատկեր 1. Անվի կողպիչը՝ կողպված դիրքում



Պատկեր 2. Անվի կողպիչը՝ բացված դիրքում



Պատկեր 3. Անվի կողպիչները հարմարացնելը

Ի գիտություն. Կողպված դիրքում հետևի անիվները չպետք է կարողանան պտտվել: Եթե անիվներից որևէ մեկը անվի կողպիչն ակտիվացված վիճակում պտտվում է, ապա պետք է հարմարացնեք անվի կողպիչն այնպես, ինչպես նկարագրված է ստորև: Խորհրդակցեք անվասայլակի սպասարկողի հետ անվի կողպիչները հարմարացնելու վերաբերյալ:

2) Հարմարացնելը

Անվի կողպիչը հարմարացնելու համար՝

Օգտագործել 10մմ մանեկադարձակ կամ ճակատադարձակի գլխիկ՝ ուռուցիկ ագուցամանեկը թուլացնելու համար: Գլխիկը հրել առաջ կամ հետ՝ ապահովելու համար պատշաճ կողպում, ինչպես ներկայացված է Պատկեր 3-ում:


Նորից ձգել մանեկը: Կրկնել նույնը սայլակի հակառակ կողմի համար:

Նստատեղը

3) Նստատեղի բարձի դիրքը

Անվասայլակի նստատեղը բաղկացած է տարբեր մասերից՝ նստոցից (պատկեր 4) և նստատեղի բարձից ու երեսքաշից (պատկեր 5). Մինչև անվասայլակն ըստ Պատկեր 7-ի օգտագործելն ապահովել, որ նստատեղի բարձը ճիշտ դիրք ունենա նստոցի նկատմամբ:

Նստատեղի բարձն անվասայլակի վրա դնելու համար՝ նստոցի վրա գտնվող վելկրո կաշուկի կարթածն շերտը (պատկեր 4) տեղադրել նստատեղի բարձի տակ գտնվող վելկրո կաշուկի խավիտ հատվածին համաչափ և ամուր սեղմել (պատկեր 6): Բարձի նախանստոսկրային նիստը [ազդրային հատվածի համեմատ իջեցված հետևամասը] պետք է տեղադրված լինի առջևում (պատկեր 7, ձախ նկարը), իսկ բարձի զիպ փակվող հատվածը՝ հետևում: Նստատեղի բարձի առջևի եզրը պետք է նստոցի առջևի եզրին հավասարացված լինի (պատկեր 7, աջ նկարը):



Պատկեր 4. Նստոց



Պատկեր 6. Նստատեղի բարձր ճիշտ տեղադրելը



Պատկեր 5. Նստատեղի բարձր՝ երեսքաշով (տեսքը՝ ներքևի հատվածից)



Պատկեր 7. Նստատեղի բարձր՝ ճիշտ դիրքում: Տեսքը՝ վերևից (ձախ նկարը) և կողքից (աջ նկարը)

4) Ճիշտ դիրքը

Նստատեղի լայնությունը պետք է ամբողջությամբ օգտագործվի:¹

- Ապահովել, որ օգտագործողի կոնքի և ազդրերի դիրքը հարմարավետ լինի կոնքի կողային բարձիկների և (կամ) արմնակալների խողովակների միջակայքում:
- Ազդրերը չպետք է միմյանց սեղմված լինեն:

Եթե կարծում եք, որ կոնքի կողային բարձիկները սեղմում են կամ անվասայլակը շատ նեղ է, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:

Նստատեղի խորությունը²

¹ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, «Անվասայլակի սպասարկման վերապատրաստման փաթեթ: Ուղեցույց ձեռնարկ՝ միջին մակարդակի համար» (2013թ.) <https://www.who.int/disabilities/technology/wheelchairpackage/wstpinintermediate/en/>

² Նույն տեղում

³ Նույն տեղում

- Օգտագործողը նստած դիրքում նրա ծնկների հետևի հատվածի և նստատեղի բարձի առջևի հատվածի միջև պետք է լինի առնվազն 30 մմ տարածություն (երկար ոտքեր ունեցող օգտագործողի դեպքում՝ 60 մմ)
- Օգտագործողի սրունքները չպետք է հավեն նստատեղի բարձին:
- Նախանստոսկրային նիստը պետք է գտնվի անմիջապես օգտագործողի նստոսկրի առջև:

Եթե կարծում եք, որ նստատեղը շատ երկար կամ կարճ է, ապա դիմեք Ձեր անվասայլակը սպասարկողին՝ նստատեղի խորությունը ճիշտ հարմարացնելու համար:

Ծնկները գատող բարձիկը (գատիչ)



5) Ինչպես ամրացնել, հարմարացնել և հեռացնել

Նստոցի առջևի հատվածի տակ գտնվող երկու բռնակ-հեղույսները թուլացնել (չհեռացնել) (պատկեր 8):

Հեռացնել գատիչը, այն սահեցնելով հանել գլխիկից:

Չատիչն ամրացնելու համար՝ այն սահեցնելով մտցնել գլխիկի մեջ այնքան, որ հասնի ցանկալի դիրքին, ապա կրկին ձգել բռնակ-հեղույսները:

Չատիչի դիրքը հարմարացնելու համար՝ այն սահեցնելով հրել առաջ կամ հետ այնքան, որ հասնի ցանկալի դիրքին, ապա կրկին ձգել բռնակ-հեղույսները:

Պատկեր 8. Նստոցի տեսքը դիմացից՝ ներքևի կողմից

6) Ծիշտ դիրքը

Ապահովել, որ օգտագործողի ազդրերի և գատիչի միջև բարձր ճնշում առկա չլինի: Չատիչը չպետք է որևէ ճնշում գործադրի աճուկի հատվածի վրա: Այն պետք է օգտագործողի աճուկի հատվածից 40–ից 60 մմ հեռու գտնվի:³

ՀԵՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Անվասայլակի հենոցային համակարգը բաղկացած է տարբեր մասերից՝ թիկնակի հիմքից (պատկեր 9) և թիկնակի բարձից ու երեսքաշից:



Պատկեր 9. Թիկնակի հիմքը և դրա վրայի վելկրոն



Պատկեր 10. Թիկնակը՝ ճիշտ դիրքում: Թիկնակի բարձր և հիմքը՝ հավասարացված:
Տեսքը՝ վերևից (ձախ նկարը) և առջևից (աջ նկարը)

7) Թիկնակի բարձի դիրքը

Անվասայլակն օգտագործելուց առաջ ապահովել, որ թիկնակի բարձը թիկնակի հիմքի նկատմամբ ճիշտ դիրք ունենա:

Թիկնակի բարձն անվասայլակի վրա տեղադրելու համար՝ թիկնակի հիմքի առջևում գտնվող վելկրո կաշուկի կարթածն շերտը (պատկեր 9) հավասարացնել թիկնակի երեսքաշի վրա գտնվող վելկրո կաշուկի խավիտ շերտի հետ և ամուր սեղմել: Թիկնակի բարձի վերին եզրը պետք է համաչափ լինի թիկնակի հիմքի վերին եզրին (պատկեր 10):

8) Ճիշտ դիրքը

Թիկնակի բարձրությունը պետք է հավասար լինի օգտագործողի ուսերի վերնամասին:

Եթե կարծում եք, որ թիկնակի բարձրությունը օգտագործողի համար բավարար չէ կամ չափից ավելին է, ապա դիմեք ձեր անվասայլակը սպասարկողին:

Կողային հենաբարձիկները

9) Ճիշտ դիրքը

Օգտագործողի կոնքը և ազդրերը պետք է կիպ և հարմարավետ դրված լինեն կոնքի կողային բարձիկների միջև, որոնք պետք է լինեն կոնքազդրային հոդից ներքև: Ազդրերը չպետք է սեղմված լինեն միմյանց:²

Օգտագործողի իրանը պետք է կիպ և հարմարավետ հենված լինի իրանի կողային բարձիկների միջև, որոնք չպետք է որևէ ճնշում գործադրեն անութների վրա: Օգտագործողի անութների և իրանի կողային բարձիկների վերնամասի միջև առնվազն 50 մմ տարածություն պետք է լինի:³

Ապահովել, որ իրանի հատվածի բարձիկները թևի շարժումները չխոչընդոտեն, եթե օգտագործողը չի կարող ինքնուրույն տեղաշարժել անվասայլակը:

Իրանի և կոնքի կողային բարձիկները չպետք է խոչընդոտեն անվասայլակի վրա կամ անվասայլակից տեղափոխվել, այն տեղաշարժել և գրասեղանից կամ սեղանից օգտվել:

² Նույն տեղում

³ Նույն տեղում

Եթե կարծում եք, որ կոնքի և (կամ) իրանի կողային բարձիկներն օգտագործողի համար հարմարավետ տեղադրված չեն, ապա դիմեք ձեր անվասայլակը սպասարկողին:

Կոնքի ֆիքսացիայի գոտին և լանջակալը

10) Կոնքի ֆիքսացիայի գոտին. ինչպես տեղադրել և ճիշտ կրել

Կոնքի ֆիքսացիայի գոտին կապել օգտագործողի կոնքի ստորին հատվածի վրա, Նստատեղի նկատմամբ 90° անկյամբ: Ապահովել, որ կոնքի ֆիքսացիայի գոտու խծովվածքը Նույնքան բարձր լինի երկու կողմերում, և որ գոտիներից որևէ մեկը ոլորված չլինի: Ճարմանդել կոնքի ֆիքսացիայի գոտին և կարգավորել գոտու երկարությունը մինչև կիպ ամրացում՝ գոտին ձգելով յուրաքանչյուր կողմի կարգավորիչ ճարմանդից ներս կամ դուրս (պատկեր 11): Ապահովել, որ ճարմանդը գտնվի օգտագործողի կոնքի ստորին հատվածի կենտրոնում:

Կողմնային կարգավորիչ ճարմանդը



Պատկեր 11. Կոնքի ֆիքսացիայի գոտին

Կոնքի ֆիքսացիայի գոտին պետք է ամուր կապվի և օգտագործողի մաշկը չսեղմի (ձեռքով ստուգել գոտու և օգտագործողի միջև առկա տարածությունը):

11) Լանջակալը. ինչպես տեղադրել և ճիշտ կրել



Լանջակալն ամրացնել օգտագործողին: Ապահովել, որ լանջակալի բոլոր գոտիները գտնվեն միևնույն մակարդակում և որ ոչ մի գոտի ոլորված չլինի: Բոլոր գոտիները ճարմանդել, գոտիները ձգել այնքան, որ կիպ ամրացված լինեն:

Լանջակալի կենտրոնի վերին գոգավոր եզրը (պատկեր 12) պետք է հավասար լինի անուղի մակարդակին:

Ուսակալը պետք է հարմարավետ ամրացված լինի և մաշկը չսեղմի:

Ուսնատեղը

12) Ճիշտ դիրքը

Օգտագործողի ազդրերի և Նստատեղի բարձի միջև տարածությունը չպետք է լինի, և ազդրերը պետք է ամբողջությամբ հենված լինեն Նստատեղի բարձի վրա: Ազդրերի և հետույքի վրա ճնշումը պետք է հավասար բաշխված լինի:⁴

Օգտագործողի ուսնաթաթերը պետք է ամբողջությամբ հենված լինեն ուսնատեղի վրա, և ուսնաթաթի ու ուսնատեղի միջև տարածությունը չպետք է լինի: Ուսնաթաթը պետք է հենված լինի առջևից և հետևից:⁵

Եթե ազդրերի տակ տարածություն է մնում, ապա հնարավոր է՝ ուսնատեղը շատ բարձր է: Եթե ուսնաթաթի տակ տարածություն է մնում, ապա հնարավոր է՝ ուսնատեղը շատ ցածր է:

Եթե կարծում եք, որ ուսնատեղն օգտագործողի համար շատ բարձր է կամ շատ ցածր, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:

⁴ Նույն տեղում

⁵ Նույն տեղում

Գլխակալը

13) Ճիշտ դիրքը

Գլխակալի վրա պետք է հենվի օգտագործողի գլուխը՝ գանգի ստորին հատվածում: Օգտագործողի գլուխը պետք է լինի հավասարակշռված և ուղիղ դիրքում:

Եթե կարծում եք, որ օգտագործողի գլուխը գլխակալի վրա պատշաճ հենված չէ, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:

Հետևի անիվները

14) Ինչպես հեռացնել հետևի անիվները

Հետևի անիվներն անվակունդին մոտ պահել և սեղմել սռնու ելունի վրա գտնվող՝ արագ հեռացնելու կոճակը (պատկեր 13), որպեսզի սռնու ծայրի փակող գնդիկները դուրս գան (պատկեր 14):

Կոճակը սեղմած պահելով՝ անիվն ու սռնին դուրս քաշել սռնիատուփից:

Կրկնել նույնը հետևի մյուս անվի դեպքում:



Պատկեր 13. Հետևի անվի սռնու արագ հեռացման կոճակը

Պատկեր 14. Փակող գնդիկները

Պատկեր 15. Հետևի անվի սռնին սռնիատուփի մոտեցնելը, սռնիատուփից հանելը

15) Ինչպես տեղադրել հետևի անիվները

Գտնել հետևի անվի սռնու վրա գտնվող՝ արագ հեռացման կոճակը (պատկեր 13) և սեղմել այն, որպեսզի սռնու ծայրի փակող գնդիկները դուրս գան և սռնին սահելով մտնի սռնիատուփի մեջ:

Բաց թողնել արագ հեռացման կոճակը, որպեսզի սռնին փակվի սռնիատուփում (պատկեր 15): Արագ հեռացման կոճակը պետք է լրիվ մեկնված լինի, իսկ փակող գնդիկները կոճակը բաց թողնելուց հետո պետք է ընդունեն փակման դիրք:

Արմակալները

16) Ճիշտ դիրքը

Արմակալալը պետք է լինի օգտագործողի արմունկի մակարդակին՝ չբարձրացնելով կամ չճնշելով օգտագործողի ուսերը:

Եթե կարծում եք, որ արմակալներն օգտագործողի համար շատ բարձր կամ շատ ցածր են, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:

Սեղանիկը

20) Ինչպես տեղադրել, հեռացնել և կարգավորել սեղանիկը



Պատկեր 19. Սեղանիկը տեղադրելը, կարգավորելը և հեռացնելը:

Տեղադրելու համար՝ սեղանիկի ամրացման գլխիկը հավասարացնել անվասայլակի արմնկակալի բարձիկներին և տեղադրել սեղանիկը (պատկեր 19): Սահեցնելով ու հետ քաշելով բերել այն ցանկալի դիրքին և ձգել բռնակ-մանեկները:

Կարգավորելու համար՝ սեղանիկը սահեցնել դեպի առաջ կամ հետ՝ երկու կողմերի արմնկակալների բարձիկների վրա (պատկեր 19) այնպես, որ այն հասնի ցանկալի դիրքին:

Սեղանիկը ճիշտ տեղադրելու համար՝ տե՛ս ստորև՝ «Ճիշտ դիրքը» բաժինը:

Հեռացնելու համար՝ սեղանիկը սահեցնելով դուրս հանել արմնկակալի բարձիկներից (պատկեր 19):

21) Ճիշտ դիրքը

Սեղանիկը պետք է համապատասխանի Նախաբազկի և արմունկի երկարությանը և չպետք է սեղմի օգտագործողի ստամոքսը կամ հարի նրա մաշկը:⁶

Սեղանիկը չպետք է օգտագործվի օգտագործողին Նստատեղի վրա ֆիքսելու համար:

Ինչպես տեղափոխել անվասայլակը

Անվասայլակը մեքենայով տեղափոխելու համար անհրաժեշտ է առաջին հերթին օգտագործողին տեղափոխել անվասայլակից: Դա անելուց հետո անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

1. Հեռացնել հետևի անիվները: Տե՛ս սույն ձեռնարկի 17-րդ էջը:
2. Չհեռացվող մասերից բռնելով բարձրացնել անվասայլակի շրջանակը և այն տեղադրել մեքենայի մեջ: Տեղադրել հետևի երկու անիվները:
3. Անվասայլակը մեքենայից դուրս բերելուց հետո կրկին տեղադրել հետևի անիվները:

⁶ Նույն տեղում

ԻՆՉՊԵՍ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼ ԱՆՎԱՍԱՅԼԱԿՈՎ

Ի գիտություն. հետևյալ տեղեկությունները չպետք է օգտագործվեն անվասայլակի որակավորված սպասարկողի կողմից տրամադրվող վերապատրաստման փոխարեն: Անվասայլակն օգտագործելուց առաջ օգտագործողը պետք է որակավորված մասնագետի կողմից վերապատրաստվի՝ իր կարողություններին և շրջակա միջավայրի պայմաններին համապատասխան:

Անվասայլակն օգտագործելով շարժվելը

Ի գիտություն. անվասայլակ օգտագործող յուրաքանչյուր անձ տարբեր է: Տարբեր են օգտագործողների՝ անվասայլակով տեղաշարժվելու հմտությունները: Օգտագործողը և նրան ուղեկցող անձը անվասայլակն օգտագործելուց առաջ պետք է վերապատրաստվեն անվասայլակը լավագույնս վարելու վերաբերյալ:

Անվասայլակը վարելու համար⁷

- Եթե անվասայլակն օգտագործողն ինքն է տեղաշարժում (վարում) անվասայլակը, ապա խորհուրդ է տրվում, որ նա անվասայլակը հրի առաջ «Ժամը 10»-ի դիրքից «Ժամը 2»-ի դիրք՝ այնքան, որքան հնարավոր է, կատարելով հրման երկար ու սահուն գործողություն:
- Շրջադարձ կատարելու համար անհրաժեշտ է տեղաշարժման լրացուցիչ անվահեցերից մեկը հրել դեպի առաջ, իսկ մյուսը՝ դեպի հետ, մյուս ձեռքի համեմատ առաջ դիրքում գտնվող ձեռքը տանել դեպի հետ, իսկ հետ դիրքում գտնվող ձեռքը միևնույն ժամանակ բերել առաջ:
- Եթե օգտագործողն անվասայլակը տեղաշարժելու համար օժանդակության կարիք ունի, ապա ուղեկցողը պետք է անվասայլակը տեղաշարժի հետևից՝ տեղաշարժելու բռնակի միջոցով, ապահովելով, որ օգտագործողի արմուկներն ու ձեռքերը անհվների հետ չփուլ չունենան:
- Ուշադիր լինել անվասայլակից դեռևս հեռու գտնվող հնարավոր վտանգների հարցում:

Թեքությունները բարձրանալու համար⁸

- Օգտագործողը մարմնի վերին հատվածը պետք է փոքր-ինչ թեքի առաջ, ինչը կօգնի, որ անվասայլակը հետ չթեքվի:
- Կանգնել կամ հանգստանալ՝ անվասայլակը կայանելով դեպի կողք թեքված դիրքով:
- Եթե անվասայլակն ունի հավասարակշռության համակարգեր, ապա մինչև շարունակել բարձրանալը դրանք տեղում կողպել:

Թեքություններն իջնելու համար¹¹

- Օգտագործողը պետք է մարմնի վերին հատվածը հետ հրի, եթե դեպի ներքև է շարժվում:

Անվասայլակ օգտագործողին որևէ դեպքում առանց ուղեկցության չթողնել թեքություն բարձրանալիս կամ իջնելիս:

⁷ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, «Անվասայլակի սպասարկման վերապատրաստման փաթեթ: Ուղեցույց ձեռնարկ՝ սկսնակ մակարդակի համար» (2012թ.) <https://www.who.int/disabilities/technology/wheelchairpackage/en/>

⁸ Նույն տեղում ¹¹ Նույն տեղում ¹² Նույն տեղում

Աստիճաններով բարձրանալը կամ իջնելը՝ անվասայլակն օգտագործելով

Այս անվասայլակի օգտագործմամբ աստիճաններով բարձրանալիս կամ իջնելիս անհրաժեշտ է, որ օգնեն երկու անձ, որոնք բավականաչափ ուժ և հմտություն ունեն օգտագործողի և անվասայլակի ծանրությունը բարձրացնելու համար:

Աստիճաններով բարձրանալու համար¹²

- Անվասայլակը և օգտագործողին աստիճաններով բարձրացնել հետ ուղղությամբ:
- Մեկ անձ պետք է լինի օգտագործողի հետևում, մեկ անձ՝ առջևում:
- Հետևի կողմում գտնվող ուղեկցողն անվասայլակը հետ է թեքում առաջին աստիճանի վրա հենած վիճակում:
- Հետևի կողմում գտնվող ուղեկցողն անվասայլակը հետ գլորելով բարձրացնում է աստիճաններն ի վեր: Անհրաժեշտ է այդ կերպ բարձրանալ մեկական աստիճան:
- Երկրորդ ուղեկցողը կարող է օգնել՝ առջևից անվասայլակի շրջանակի չհեռացվող մասերից բռնելով:

Իջնելու համար⁹

- Օգտագործողի դիրքը՝ դեմքով դեպի շարժման ուղղությունը:
- Հետևում գտնվող ուղեկցողը հետ է թեքում անվասայլակը՝ այն հենելով հետևի ակերի վրա, և թողնում է, որ անվասայլակը յուրաքանչյուր աստիճանի վրա անիվները գլորելով դանդաղ իջնի:
- Երկրորդ ուղեկցողը կարող է օգնել առջևից անվասայլակը կարգավորելու միջոցով՝ բռնելով անվասայլակի չհեռացվող մասից:

Ի գիտություն. այս գործողությունների համար կարող է պահանջվել, որ հավասարակշռության համակարգերը վեր բարձրացված կամ հեռացված լինեն: Ապահովել, որ անվասայլակն օգտագործելուց առաջ հավասարակշռության համակարգերը կրկին ամրացվեն կամ վար սեղմվեն:

Անվասայլակի վրա նստելը

Ապահովել, որ օգտագործողն անվասայլակի վրա նստած լինի ճիշտ դիրքով: Օգտագործողը պետք է անվասայլակի վրա բավականաչափ հետ նստած լինի՝ այնպես, որ նստոսկրերը լինեն նախաստոսկրային նիստից հետ, իսկ կոնքի հետևի մասը հենված լինի թիկնակին: Խորհրդակցեք անվասայլակը սպասարկողի հետ նրա մասին, թե ինչպես ապահովել, որ օգտագործողը նստած լինի լրիվ ուղիղ, հավասարակշռված և հարմարավետ դիրքում:

Որոշ օգտագործողներ սովոր չեն նստած վիճակում երկար մնալուն, ուստի նրանցից կարող է պահանջվել որոշակի ժամանակ ուղիղ դիրքում նստելուն սովորելու համար:¹⁴ Խորհրդակցեք անվասայլակը սպասարկողի հետ այն մասին, թե որքան երկար ժամանակ օգտագործողը պետք է անվասայլակի վրա նստած լինի: Թույլ չտալ, որ օգտագործողն ամբողջ օրն անցկացնի անվասայլակի վրա նստած:

Եթե օգտագործողի շարժումները սահմանափակ են, եթե նա ամբողջ ժամանակ միևնույն դիրքում նստած է լինում և չի կարող փոխել դիրքը, ապա խորհրդակցեք անվասայլակը սպասարկողի հետ նրա մասին, թե օրվա ընթացքում օգտագործողն ուրիշ ինչ դիրք կարող է կիրառել, օրինակ՝ պառկել կամ կանգնել:

⁹ Նույն տեղում ¹⁴ ԱՀԿ (2013թ.), հղումը՝ վերևում ¹⁵ Նույն տեղում ¹⁶ Նույն տեղում

Եթե օգտագործողը սովոր է նստած դիրքին, ապա նա կարող է նույնքան ժամանակ նստած վիճակում մնալ նոր անվասայլակի վրա: Անհրաժեշտության դեպքում աստիճանաբար ավելացնել այդ ժամանակը:¹⁵

Եթե օգտագործողը սովոր չէ նստած դիրքին, ապա սկսել առավելագույնը երեսուն րոպեն մեկ ընդմիջելով:¹⁶

Օգտագործողն անվասայլակի վրա նստելու օրվանից հետո յուրաքանչյուր օր ստուգել ճնշման ենթարկված մարմնի մասերը՝ օգտագործողի նստոսկրերի ստորին հատվածում կամ ռիսկային որևէ այլ հատվածում:

Ապահովել, որ հնարավոր չլինի օգտագործողի՝ անվասայլակից սահելով վայր ընկնելը: Ապահովել, որ կոնքի ֆիքսացիայի գոտին կապված լինի ամուր և պահի կոնքի դիրքը:

Անվասայլակի վրա կամ անվասայլակից տեղափոխվելը

Տեղափոխվելու համար օգտագործողին անհրաժեշտ է լավ հավասարակշռություն և կայունություն (եթե օգտագործողը կարող է տեղափոխվել ինքնուրույն) և նրան օժանդակող կամ բարձրացնող անձ: Մինչև տեղափոխում կատարելն օգտագործողը և նրան օժանդակող անձը պետք է վերապատրաստվեն անվասայլակի սպասարկում իրականացնող որակավորված մասնագետի կողմից: Անվասայլակի սպասարկում իրականացնող մասնագետը պետք է սովորեցնի կիրառել տեղափոխման անվտանգ ու արագ մեթոդ, որը համապատասխանում է նրանց կարիքներին, հարմարավետ ու անվտանգ է նրանց երկուսի համար:

Օգտագործողին անվասայլակի վրա կամ անվասայլակից տեղափոխելուց առաջ անվասայլակը տեղադրել փոխադրման մակերեսի նկատմամբ կողային դիրքով: Պետք է ձեռնարկել ցանկացած նախազգուշական միջոց, որպեսզի երկու մակերեսների միջև տարածությունը նվազի:

Տեղափոխում կատարելուց առաջ մշտապես գործարկել անվի կողպիչները՝ հետևի անիվները անշարժացնելու համար, և անվակները առաջ պտտեցնել՝ անվասայլակի անվամբը լայնացնելու համար:

Ապահովել, որ օգտագործողին անվասայլակից տեղափոխելուց առաջ բոլոր գոտիները և լանջակալներն արձակված լինեն:

Ապահովել, որ տեղափոխման ընթացքում օգտագործողի մարմնի որևէ մաս չհարվածի կամ չհարվի անվասայլակին: Դա կարող է նպաստել պառկելախոցների առաջացմանը: Թույլ չտալ, որ օգտագործողն անզգուշ շարժումով ընկնի անվասայլակի վրա: Ծանրությամբ հանդերձ տեղափոխման դեպքում մշտապես օգտագործողին անվասայլակի վրա նստեցնել դանդաղ և զգուշությամբ:

Եթե տեղափոխում կատարելու հարցում մեծ փորձ չունեք, ապա խնդրեք, որ մեկ այլ անձ Ձեզ օգնի:

Ապահովել, որ օգտագործողն անվասայլակի վրա տեղափոխվելուց հետո պատշաճ դիրքով նստած լինի:

ՃՆՇՈՒՄԸ ԹՈՒԼԱՑՆԵԼՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ

Պառկելախոցը կարող է առաջանալ տարբեր պատճառներով, այդ թվում՝ տևական ժամանակ նստելու, ոչ ճիշտ կեցվածքի, մարմնի ծանրության ոչ ճիշտ բաշխման, հարման, օգտագործողի մարմնի և կեցվածքի օժանդակ պարագաների միջև բարձր ճնշման կետերի, զգայության բացակայության, աղիների և միզապարկի խնդիրների, շարժողական սահմանափակումների, քաշի և այլն:¹⁰ Օգտագործողը և նրան ուղեկցողը պետք է համապատասխան բժշկական մասնագետի կողմից խորհրդատվություն ստանան այսպիսի բարդացումները կանխելու և կառավարելու վերաբերյալ: Նրանք նաև պետք է անվասայլակը սպասարկող որակավորված մասնագետի կողմից պատշաճ վերապատրաստում անցնեն ճնշումը թուլացնելու կառավարման և տեխնիկայի վերաբերյալ:

¹⁰ ԱՅԿ(2012թ.), հղումը՝ վերևում. ¹⁸ ԱՅԿ (2013թ.), հղումը՝ վերևում ¹⁹ Տիտուս Լ. և Բիրթ Ջ. «Ներկայիս ապացույցների կիրառումը անվասայլակի և նստած դիրքի ճնշման կառավարման կլինիկական պրակտիկայում» (2016թ.) http://www.seatingsymposium.com/images/pdf/PS/PS5_Titus.pdf ²⁰ ԱՅԿ (2012թ.), հղումը՝ վերևում:

Ապահովել, որ օգտագործողը ճիշտ դիրքով նստած լինի, նրա համար ճիշտ կեցվածքի օժանդակ հարմարանքներ ընտրված լինեն, նա նստած լինի հնարավորինս ուղիղ, հավասարակշռված և հարմարավետ դիրքով: Կեցվածքի օժանդակ հարմարանքները կարևոր են կեցվածքի բարելավման, ծանրության հավասարաչափ բաշխման, ինչպես նաև կտրող ուժերը նվազեցնելու համար, որոնք իրենց հերթին նվազեցնում են պառկելախոցերի առաջացման վտանգը:¹⁸ Անհրաժեշտ են անվասայլակի կարգավորումներ և կեցվածքի օժանդակ բաղադրիչներ: Մշտապես խորհրդակցել անվասայլակը սպասարկողի հետ մինչև անվասայլակի հարմարացում կամ կարգավորում իրականացնելը:

Եթե օգտագործողը շարժողական սահմանափակումներ ունի, մշտապես նստում է նույն կեցվածքով և չի կարող փոխել դիրքը, ապա խորհրդակցեք անվասայլակը սպասարկողի հետ նրա մասին, թե օգտագործողն ինչ այլ դիրք կարող է ընդունել օրվա ընթացքում: Պարբերաբար դիրքը փոխելը կարող է օգնել թուլացնել ճնշումը: Տարբերակներից մեկը նստած դիրքը պառկած դիրքով փոխարինելն է:

Օգնել անվասայլակն օգտագործողին կատարել մարմնի հենման կետերի փոփոխություն յուրաքանչյուր տասնհինգից երեսուն րոպեի մեկ, առնվազն երեսուն վայրկյանից մինչև երկու րոպե՝ մարմնի վերին հատվածն առաջ կռացնելով:¹⁹ Խորհուրդ է տրվում մարմնի հենման կետերի փոփոխությունն ավելի երկար ժամանակամիջոցում կատարել (առավելագույնը չորս րոպե): Թույլ չտալ, որ օգտագործողն ամբողջ օրն անցկացնի անվասայլակին նստած:

Ստուգել անվասայլակն օգտագործողի մարմնի մասի և կեցվածքի օժանդակ այնպիսի հարմարանքների միջև ճնշումը, ինչպիսիք են կոնքի (իրանի) կողային բարձիկները և ծնկները զատող բարձիկը: Դրանք պետք է ամուր և հարմարավետ ամրացված լինեն: Չպետք է լինեն բարձր ճնշման կետեր: Եթե կարծում եք, որ օգտագործողն աճ է ունեցել, և որ անհրաժեշտ է կարգավորել անվասայլակը, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:

Ստուգել անվասայլակն օգտագործողի մարմնի և կոնքի ֆիքսացիայի գոտու/լանջակալի միջև ճնշումը: Օժանդակ հարմարանքը պետք է ամրացված լինի ամուր, սակայն ոչ պիրկ:

Օգտագործողն անվասայլակի վրա նստելուց հետո ստուգել նրա մաշկը նստոսկրերի հատվածում և ռիսկային ցանկացած այլ (օրինակ՝ կոնքազդրային հոդի կամ պոչուկոսկրի) հատվածում՝ պառկելախոցի նշաններ հայտնաբերելու համար:

Խոնավ կամ ոչ մաքուր նստատեղի բարձր կարող է հանգեցնել մաշկի վնասման: Բացի այդ, կղանքում առկա բակտերիաները արագ հանգեցնում են վարակված պառկելախոցի առաջացմանը: Մեզի և կղանքի մեջ առկա անպետք նյութերը նույնպես կարող են վարակել պառկելախոցը և այրել մաշկը: Ստուգել, որ նստատեղի բարձր մշտապես չոր, մաքուր և գործածության համար պիտանի վիճակում լինի: Դադարեցնել նստատեղի բարձի օգտագործումը, եթե այն թաց է: Այդ դեպքում պետք է նախ թողնել, որ այն չորանա:²⁰

Ապահովել, որ օգտագործողի մարմնի որևէ մաս չհարվի անվասայլակի հետ շփման արդյունքում: Հատուկ ուշադրություն դարձնել նրան, որ օգտագործողի արմուկները և ձեռքերը չհարվեն անվասայլակի հետևի ակերի շարժման ժամանակ ակերի հետ փոխազդեցության արդյունքում: Դա կարող է մաշկի այրվածք առաջացնել:

Օգտագործողին անվասայլակի վրա կամ անվասայլակից տեղափոխել զգուշությամբ: Տեղափոխման ընթացքում նրա մարմինը անվասայլակին հարվածելը կարող է վնասել մաշկը:

Օգտագործողի նստոսկրերի հատվածում կամ պառկելախոցի համար ռիսկային որևէ այլ հատվածում կարմիր կամ մուգ գույնի նշան հայտնաբերելու դեպքում օգտագործողին անմիջապես հեռացնել անվասայլակից: Մաշկը կրկին ստուգել երեսուն րոպե անց, և կարմրությունը կամ մաշկի մուգ գույնը չվերանալու դեպքում դադարեցնել անվասայլակի օգտագործումը և անհապաղ դիմել անվասայլակը սպասարկողին:

Օգտագործողի նստոսկրերի հատվածում կամ պառկելախոցի համար ռիսկային որևէ այլ հատվածում վերքեր նկատելու դեպքում անհապաղ դադարեցնել անվասայլակի օգտագործումը և դիմել անվասայլակը սպասարկողին կամ բժշկական մասնագետին:

ՄԱՔՐՈՒՄԸ, ԸՆԹԱՑԻԿ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Անվասայլակն ավելի երկար ժամանակ շահագործելու և օգտակարությունը բարելավելու համար խորհուրդ է տրվում իրականացնել ստորև նկարագրված գործողությունները: Օգտագործողը և նրան ուղեկցողը պետք է անվասայլակի որակավորված մասնագետի կամ տեխնիկական մասնագետի կողմից վերապատրաստվեն մինչև անվասայլակի ընթացիկ սպասարկումն ինքնուրույն իրականացնելը: Անվասայլակի նորոգումն ու մասերի փոխարինումը պետք է իրականացվեն անվասայլակի որակավորված տեխնիկական մասնագետի կողմից:

Ինչպես պահպանել անվասայլակը

Եթե զննության և ընթացիկ սպասարկման հետևյալ գործողությունները կատարելիս անվասայլակի հետ կապված որևէ խնդիր նկատեք, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:¹¹

Առաջարկում ենք յուրաքանչյուր շաբաթ կատարել հետևյալ գործողությունները՝

- Ստուգել դողերի ճնշումը: Դողերը պետք է փչվեն 60 ֆունտ-ուժ քառակուսի դյույմի վրա (PSI) ճնշման տակ: «Լիբերթի» անվասայլակի հետ տրամադրվում է պնեմատիկ (պատկեր 20): Եթե դողերից որևէ մեկը թողած է, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:
- Ստուգել նստատեղի և թիկնակի բարձերը, կողային բարձիկները և բոլոր երեսքաշները: Երեսքաշները պետք է լավ վիճակում լինեն, մաքուր և չպետք է անցքեր կամ պատռվածքներ ունենան: Դրանց զիպ փականը պետք է նորմալ գործի, իսկ վելկրո կաշուկները չպետք է մաշված լինեն: Փրփուրը և խծուծվածքը չպետք է վնասված, անհարթ լինեն և պետք է սեղմվելիս վերադառնան ելման դիրք:
- Ստուգել հետևի անիվները: Ստուգել դողերի պահպանաշերտի մաշվածությունը: Դողերը փոխել, եթե դրանք տեղ-տեղ թողած են, ունեն ճաքեր կամ մաշված պահպանաշերտ:
- Բոլոր անվաճաղերը պետք է հավասարաչափ ձգված լինեն, տեղում լինեն, կոտրված կամ ծռված չլինեն: Հետևի երկու անիվները պետք է ուղիղ գլորվեն՝ առանց ավելորդ դիմադրության, դեպի կողք թեքվելու կամ շփման: Սնիները պետք է պատշաճ ձգված լինեն՝ առանց ավելորդ խաղացքի: Արագ հեռացնելու կոճակները պետք է հեշտությամբ սահեն դեպի տնիսատուփ և անմիջապես ֆիքսեն դիրքը: Տեղաշարժման լրացուցիչ անվահեցերը պետք է ձգված լինեն անիվներին և չպետք է ներճնշված կամ ծռված լինեն:
- Ստուգել առջևի անվակները: Երկուսն էլ պետք է գետնին հպվեն հավասարաչափ և պետք է լինեն ուղղաձիգ հավասարացված: Անվակների անիվները չպետք է մաշված կամ ծակված լինեն և պետք է իրենց տնու շուրջն ազատ պտտվեն: Անվակի համակարգի հեղույսը պետք է ձիգ լինի և խցափակիչ ունենա: Անվակի համակարգը պետք է ազատ պտտվի իր տնու շուրջը՝ առանց ավելորդ խաղացքի:
- Ստուգել անիվների կողպիչները: Դողերի մաշվելուն զուգընթաց անվի կողպիչները պետք է համապատասխան կարգավորում ստանան: Դրանք պետք է կիպ ամրացված լինեն շրջանակին և պատշաճ կերպով հաղորդվեն դողերի հետ: Տե՛ս էջը, որտեղ ներկայացվում է, թե ինչպես կարգավորել անվի կողպիչները: Եթե դրանք պատշաճ չեն գործում, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին:

Առաջարկում ենք յուրաքանչյուր ամիս կատարել հետևյալ գործողությունները՝

- Ստուգել անվասայլակի շրջանակի և նստոցային համակարգի վրայի բոլոր կապիչները: Ստուգել, որ դրանք լինեն ամուր և ապահով: Եթե այլ բան նշված չէ, ապա կապիչները պետք է կիպ կապված լինեն: Չափից ավելի չձգել: Եթե կապիչը բացակայում է, պատռված է կամ ջարդված, ապա դիմեք անվասայլակը սպասարկողին: «Լիբերթի» անվասայլակների հետ տրամադրվում է նաև «Ընթացիկ սպասարկման և հավաքման գործիքակազմ» (պատկեր 21)՝ համապատասխան տարբեր չափերի մանեկադարձակով, ճակատադարձակի գլխիկով և մանեկապտտիչով:

¹¹ UPMC-SCI. (2015թ.) «Անվասայլակի ընթացիկ սպասարկման վերապատրաստման ծրագիր», <http://www.upmc-sci.pitt.edu/node/924>:

- Ստուգել, թե արդյոք խողովակը և թիկնակի հիմքը որևէ ճաք, կեղտ, կոտրվածք ունեն կամ դրանց որևէ մետաղական մաս առանձնացած է:
- Ստուգել հավասարակշռության համակարգերը: Դրանք պետք է պատշաճորեն սևեռվեն և չունենան կոտրված որևէ մաս (ներառյալ փոքր անվակը):
- Ստուգել, թե արդյոք շրջանակը, եռակցած կետերը, անցքերը և ծալատեղերը սարքին են: Շրջանակի վրա որևէ ճաք կամ կոտրվածք նկատելու դեպքում անմիջապես դիմել անվասայլակը սպասարկողին:
- Տարեկան մեկ անգամ անվասայլակը պետք է ստուգվի անվասայլակի որակավորված տեխնիկական մասնագետի կողմից:



Պատկեր 21. Ձեռքի գործիքներ, որոնք ներառված են «Լիբերթի»-ի «Ընթացիկ սպասարկման և հավաքման գործիքակազմ»-ում

Մաքրումը

22) Շրջանակը

Շրջանակից հեռացնել խողովակի և թիկնակի բարձերը:

Շրջանակից, սրունքի հետին շրջանը պահող գոտուց, լանջակալից և կոնքի ֆիքսացիայի գոտուց հեռացնել կտորից ցանկացած երեսքաշ:

Առնվազն ամիսը մեկ անգամ անվասայլակի շրջանակը սրբել մաքուր, խոնավ լաթով և pH հավասարակշռված բանաձևով օճառով (ինչպես օրինակ՝ ավտոմեքենայի լվացման համար նախատեսված հատուկ միջոցներով):

Շրջանակն ավելի լավ մաքրելու համար հեռացնել հետևի անիվները:

23) Երեսքաշները, լանջակալը, սրունքի հետին շրջանը պահող և կոնքի ֆիքսացիայի գոտիները

Հեռացնել կտորից բոլոր երեսքաշները և ձեռքով լվանալ՝ օգտագործելով թույլ օճառային լուծույթ: Չորացնել ստվերոտ վայրում:

24) Բարձերը և բարձիկները

Հեռացնել երեսքաշը:

Փրփուրից բարձը կամ բարձիկը դնել այնպիսի մակերեսի վրա, որն ի վիճակի է թացանալու:

Սրսկող 22ի մեջ լցնել մեկ բաժին թույլ օճառային լուծույթ և երկու բաժին տաք ջուր: Թափահարել սրսկող շիշը՝ լուծույթը խառնելու համար:

Սրսկել լուծույթը բարձի կամ բարձիկի ամբողջ մակերեսի վրա: Շրջել այն և նույնը կրկնել մյուս կողմի համար: Երկու կողմերի վրա լուծույթը սրսկելուց հետո թողնել օճառային լուծույթը քսանից երեսուն րոպե:

Խոնավ մաքրող կտորով մաքրել օճառային լուծույթը: Ջուր չսրսկել:

Թողնել, որ մետաղը չորանա բնական եղանակով, սակայն առանց արևի ճառագայթների ուղիղ ազդեցության: Լրիվ չորանալու համար կարող է պահանջվել քսանչորս ժամից մինչև մի քանի օր՝ կախված փրփուրի թացությունից:

Յուրաքանչյուր բարձի վրա քաշել համապատասխան երեսքաշը ճիշտ դիրքով (զիպ փակվող հատվածը՝ հետևի կողմում կամ ներքևում):

25) Հետևի անիվները և առջևի անվակները

Առնվազն ամիսը մեկ անգամ հետևի անիվների և անվակների անիվների սռնիների առանցքակալից հեռացնել թելերի ու մագերի կուտակումները:

Որևէ աղմուկ լսելու կամ անվասայլակը տեղաշարժելու դժվարություններ հայտնաբերելու դեպքում դիմել անվասայլակը սպասարկողին:

Յուրաքանչյուր շաբաթ խոնավ լաթով սրբել հետևի անվի սռնիների և սռնիատուփերի շուրջը:

Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ քանդել անվակի համակարգի պատյանը՝ կուտակված մագերից հեռացնելու համար:

Այս անվասայլակի համար չօգտագործել «WD-40» տիպի կամ այլ ներթափանցող յուղ: Անվակների կամ դողերի վրա չքսել որևէ քիմիական մաքրող նյութ:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ինչ անել, եթե զննության ու ընթացիկ սպասարկման գործողությունների ընթացքում անվասայլակի հետ կապված խնդիրներ հայտնաբերվեն

«Լիբերթի» անվասայլակի, դրա բաղադրիչների կամ գործարկման հետ կապված որևէ խնդրի դեպքում դիմել անվասայլակը սպասարկողին: Տե՛ս Էջը, որտեղ նշված են Ձեր անվասայլակը սպասարկողի տվյալները:

Ինչպես Նորոգել թողած դողերը

«Լիբերթի» անվասայլակի հետ տրամադրվում են թողած դողերի նորոգման գործիքներ (պատկեր 22). Առաջարկում ենք թողած դողը նորոգելու համար դիմել անվասայլակի որակավորված մասնագետի կամ հեծանիվների խանութ-սրահ, եթե Դուք դա անելու համապատասխան որակավորում չունեք: Թողած դողը նորոգելու համար հետևեք գործիքները կիրառելու՝ ստորև ներկայացված ցուցումներին:



Պատկեր 22. Թողած դողերի նորոգման գործիքներ

ԵՐԱՇԽԻՔ




Անվասայլակի շրջանակի դեպքում՝ նյութերի և պատրաստման թերություններ, 18 ամիս ժամկետով:

Բաղադրիչների (անվի կողպիչներ, անվակների երկժանիներ, բրեկետներ, Նստոցային համակարգի կմախք) դեպքում՝ 6 ամիս ժամկետով:

Մաշվող մասերի (դողեր, խողովակներ, անվակներ, առանցքակալներ, կեցվածքի օժանդակ պարագաներ, բարձեր, պաստառներ) սարքին վիճակը ստացվելու ժամանակ երաշխավորվում է, սակայն բնական մաշվածության չենթարկվելը չի երաշխավորվում:

[illegible]


ՇՐՋԱՆԱԿՆ ԱՐԱԳ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ




Քայլ 1. Հավաքել շրջանակի աջակողմյան և ձախակողմյան խողովակները:

Քայլ 2. Հավաքել արմնկալաները:


Քայլ 3. Հավաքել առջևի անվակները և անվասայլակը տեղաշարժելու բռնակը:




Քայլ 4 (ըստ ցանկության). Հավաքել ոտնատեղի խողովակի երկարացման հարմարանքները:




Քայլ 5. Հավաքել ոտնատեղը:




Քայլ 6. Տեղադրել հետևի անիվները:



Քայլ 7. Հավաքել անվի կողպիչները:




Քայլ 8. Տեղադրել կողային պաշտպանակները:



Քայլ 9 (ըստ ցանկության). Հավաքել հավասարակշռության համակարգերը:


Քայլ 10. Հավաքել սեղանիկը:

ՆՍՏՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵՐԻ ԱՐԱԳ ՀԱՎԱՔՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ




Քայլ 1. Նստոցը և անվասայլակը հետ թեքելու մեխանիզմն ամրացնել շրջանակին:


Քայլ 2. Թիկնակի հիմքն ամրացնել նստոցին և իրանի հատվածին ու շրջանակների սեղմաններին:




Քայլ 3. Կողային հենաբարձիկները (4) ամրացնել թիկնակի հիմքին:




Քայլ 4. Գլխավան ամրացնել թիկնակի հիմքին:



Քայլ 5. Լանջավան ամրացնել թիկնակի հիմքին:



Քայլ 6. Կոնքի ֆիքսացիայի գոտին ամրացնել նստոցին:



Քայլ 7 (ըստ ցանկության): Տեղադրել զատիչը:

